



Հայաստանում, Սփյուռքում, ո՞ր, ե՞րբ և որո՞նց կողմե այսօր մեր առաքյալները կհիշատակվին, ես չեմ գիտեր, բայց կենթադրեմ, որ քիչ է թիվը այն մարդոց, որոնք այսպես կհավաքվին և արժանի հարգանքը կմատուցանեն մեր Եկեղեցվո առաջին մեծ սուրբերուն, որոնց մեր ժողովուրդը «Լուսավորիչ» անուն է տվել՝ զիրենք պատվելու համար:

Ապրի՛ք, Հոգևոր Ծեմարանի սաներ և հատկապես այս հայտագրին մասնակցող ուսանողներ, որ գնացիք, գրքերը կարդացիք, ուսումնասիրեցիք, երգ սովորեցիք, Նարեկացի բացիք, ավանդության մասին մտածեցիք և եկաք չեր բանաստեղծություններով, ասմունքներով և երգերով այս ոգեկոչական հանդեսը մեզի շնորհեցիք:

Թե՛ իբրև գնահատանքի և թե՛ մանավանդ իբրև թելադրանքի մեկ-երկու խոսք կուզեմ ըսել նաև հայտագրի բոլոր մասնակիցներուն: Պիտի երբեք չմոռնալ, որ Հոգևոր Ծեմարանը այն տեղը չէ, ուր մենք պարզ ուսումնասիրություններ ենք անում մարդոց մասին կամ գիտական այս կամ այն ճյուղին մասին, մենք ծանոթություններ ամբարող մարդիկ չենք, որ երթանք թեզ պաշտպանենք: Հոգևոր Ծեմարանն այն տեղն է, ուր հայկական ավանդությունը պիտի պահվի, հայկական ավանդությունը պիտի քարոզվի, այդ թվում և հայոց պատմությունը պիտի տարածվի: Այս պատճառով ես գնահատանքի խոսք ունիմ բոլոր այն ճիգերուն համար մեր բանախոսներին, որոնք պատմիչներ կարդացել են, գիտնականների ամբողջ տեսություններ վերլուծել են, որպեսզի կարենան հայկական ավանդությունը ամրագրել պատմական իրական տվյալներով: Այս է Հոգևոր Ծեմարանի ամենակարևոր առաքելություններեն մեկը, և անոր համար ես կուզեի միշտ, որ այստեղ դասախոսություն եղած պահուն ամեն մարդու համար հստակ դառնար, թե ո՞վ էր մեր առաքյալը, ուրկե՞ եկավ, բայց մանավանդ ի՞նչ արեց Հայաստանում. ի վերջո մեր առաքյալները այստեղ նահատակվեցին և իրենց կյանքը մեզ ավանդ են թողել, և այդ ավանդը մենք պիտի անպայման պահենք սուրբ՝ հաճախ պատմելով իրենց այստեղ անցուցած կյանքը, այստեղ կատարած քարոզչությունը, և մանավանդ մեր առաջին նահատակների խոստովանանքն իրենցն է:

Եվ այս սիրով կուզեմ ըսել՝ ինչ լավ կըլլա, եթե այսօր մեկ-երկու ուսանողի երևակայության մեջ և կամ հոգու մեջ անոնց արտասանած մեկ-երկու խոսքը, մեկ-երկու աղոթքը այստեղ հնչեին, որպեսզի մենք ոգևորվեինք իրենց անչնական օրինակով և այսօր երեկոյան անկողին երթալու մեկ պահուն մենք հոգեկան մի մեծ թռիչքով կապվենք իրենց հետ և հաղորդակից լինենք այդպիսով Սուրբ Հոգու առաջնորդության, որով իրենք եկան և Աստծու խոսքը մեր ժողովրդին բերին»: Այնուհետև Սրբազան Հայրը ևս, անդրադառնալով առաքելության գաղափարին՝ ասաց. «Սիրելի ուսանողներ, առաքյալը այն մարդն է, որ պատգամ ունի աշխարհին տալու, որ աշխարհին խոսք է բերել,

բայց իր բերածը իրենը չէ, իր պատգամը իրենը չէ, ուրիշինն է, ուրիշն է իրեն այդ պարտականությունը տվել և ինքը այդ ավանդը իրեն տվողի անունով և իր ամբողջ կյանքի գերագույն պարտականությունն է դարձնում, այդ ավանդը ապահով տեղ հասցնել: Դրա համար հին ատեն առաքյալները պատիվ ունեին և առաքյալներն իրավունք ունեին և առաքյալները դեսպանների կարգավիճակ ունեին:

Աղոթքս է, որ մենք այսօր ևս Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի պես առաքելությունը իրագործենք, եթե կուզեք, նվիրագործենք: Մեր ժողովուրդը Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի լույսը նկատել է իր կյանքի հիմնական էությունը, հիմնական սկզբունքը և աշխարհը բացահայտելու իր աշխարհայայքը և կեցվածքը: Այսօր, այս տոնակատարությունը մեզի պիտի հիշեցնե, որ մենք այդպես մարդիկ ենք, մենք այդպես ժողովուրդ ենք, լուսավորիչ ունեցել ենք, բայց այսօր կրնանք բոլոր նույն հավատքով ըսել, որ ահա այս է լույսը, այս է ամենամեծ ճշմարտությունը, որ կբացատրե մեզի աշխարհի մյուս բոլոր իրականությունները և հարաբերությունները:

Եվ կկարծեմ, որ այդ կամքը, այդ հավատքը, այդ համոզմունքը այսօր ամբողջ աշխարհի մեջ տկարացել է, բայց հայության քով չպետք է տկարանա: Եվ անոր համար մեզմե յուրաքանչյուրին ճիգը, յուրաքանչյուրին աշխատանքը, վեց տարիներու ուսմունքը պետք է մեզի համար առիթ հանդիսանա, որ այդ մեկ կամքը կերտենք մեր մեջ, այդ համոզմունքը ունենանք և այլևս չզբաղինք աշխարհի մեջ փնտրելու ուրիշ բաներ, որ մեր կյանքը արժևորեն, մեզ համար լույս բացեն ուրիշ աշխարհի իրականություններուն: Ես կհավատամ, որ անոր համար է մեր պրկված կյանքը, և ամեն օր կտեսնեմ, թե ինչպես ուսանողներուն մեջ կամաց-կամաց հետզհետե կավելանա այն իմաստությունը, այն փորձառությունը, որոնցով իրենք ալ կզգան, թե իսկական Ավետարանի լույսն է, որ մեր ճամփան պիտի լուսավորե ապագային և իրապես Զրիստոս և Աստված Ինքն է աշխարհի լույսը, որ այս երկու առաքյալների միջոցով նաև փոխադրվեց Հայաստան աշխարհ, և որոնց սքանչելի տոնակատարությունը դուք կատարեցիք այսօր:

Այդ լույսը չեզ ավանդ, երեխե՛ք, լավ պահեք, այդ լույսը չեք փառքն է, փառավորվեցեք դրանով, այդ լույսը չեք կյանքը քաղցրացնող ամենամեծ ուժը պիտի ըլլա ապագային, լավ պահեցեք, վարչքերդ ի կատար»:

Ն. ԿՈՍՏԱՆՅԱՆ